ՍԱՂՄՈՍ 57

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Հալածիչներից ազատվելու աղոթք <u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին, «Մի՛ ապականիր» եղանակով. Դավթի երգը Սավուղի երեսից քարայրում թաքնված ժամանակ	Թշնամիներից ապահով լինելու աղոթք	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք	Օգնության աղոթք	Կատաղի թշնամիների մեջ
57:1-3	57:1	57:1-3	57:1	57:1
	57:2-3		57:2-3	57:2-3
57:4-6	57:4-5	57:4	57:4	57:4
		57:5	57:5	57:5-6
	57:6	57:6-10	57:6	
57:7-11	57:7-8		57:7-11	57:7
				57:8
	57:9-10			57:9-11
	57:11	57:11		

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սաղմոս 57 առանձնահատուկ է իր բառերի կրկնակի անգամ /կամ եռակի/ կիրառությամբ:
1. ողորմիր ինձ, Սաղմ. 57:1
2. ապավինելու եմ, Սաղմ. 57:1
3. սիրտս պատրաստ է, Սաղմ. 57:7
4. արթնացիր, Սաղմ. 57:8

Բ. Սաղմոս 57:6 և 7-ում մի քանի ԲԱՅԵՐ և ԳՈՅԱԿԱՆՆԵՐ կան, որոնք սկսում են եբրայերեն *Քաֆ* տառով:
1. պատրաստ – BDB 465, KB 464
2. խոնարհվել – BDB 496, KB 493
3. փորել – BDB 500, KB 496
4. ընկնել – BDB 656, KB 709
5. պատրաստ – BDB 465, KB 464 (երկու անգամ)
6. ԳՈՅԱԿԱՆ, փառք, Սաղմ. 57:5 – BDB 458
7. ԳՈՅԱԿԱՆ, իմ անձը/լյարդը, Սաղմ. 57:8 – BDB 458 (NASB տալիս է «փառք», BDB 458)
8. ԳՈՅԱԿԱՆ, տավիղ, Սաղմ. 57:8- BDB 490

Գ. Սաղմոս 57:6 տիպիկ «հակադարձ» շարժառիթ է՝ ՀԿ-ում մեծ տարածում ունեցող: Թշնամիները չարիք են ծրագրում, սակայն բռնվում են իրենց իսկ հնարքներով:

Դ. Երկու կարևոր աստվածաբանական տերմիններ են կրկնվում:
1. բարեգթություն (*hesed*) – BDB 338, տես՝ Սաղմ. 57:3 (անձնավորված), 10 (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (*HESED*)</u>)
2. հավատարմություն/ճշմարտություն (*emet*) – BDB 54, Սաղմ. 57:3 (անձնավորված), 10 (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼ, ՎՍՏԱՀԵԼ, ՀԱՎԱՏՔ և ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ</u>):

Ե. Այս Սաղմոսը նշում է «ազգերի»: Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀԵՎԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ:</u>

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 57:1-3
[1]Ողորմի՛ր ինձ, ո՛վ Աստված, ողորմի՛ր ինձ,
Քանի որ իմ անձը Քեզ է վստահում:
Քո թևերի հովանուն եմ ապավինելու,
Մինչև այս պատուհասներն անցնեն:
[2]Բառնձրյալ Աստծուն եմ աղաղակելու՝
Ինձ բարիք անող Աստծուն:
[3]Երկնքից պիտի ուղարկի ու ինձ փրկի
Ինձ կուլ տալ ցանկացողի նախատինքից. Սելա
Աստված ուղարկելու է Իր ողորմությունն ու ճշմարտությունը:

57:1 Այս Սաղմոսը բնութագրվում է բառերի կրկնակի կիրառությամբ (այսինքն՝ Եբրայերեն զուգահեռականությունը, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԲՐԱՅԱԿԱՆ ՊՈԵԶԻԱ</u>): Տես Համատեքստային Հասկացություններ, Ա:

❖ **«Ողորմի՛ր ինձ»** Սաղմոս 57:1 (երկու անգամ): Տես Սաղմ. 56:1-7 գրառումը:

❖ **«ապաստարան»** ԲԱՅԸ (BDB 340, KB 334) պարբերաբար կրկնվող թեմա է Սաղմոսներում: Տես՝ Սաղմ. 2:12 և 5:11-12: Այստեղ բառախաղ կա՝

1. ՎԱՂԱԿԱՏԱՐԻ միջև, որն արտահայտում է ավարտված գործողություն և վերջնական վիճակ
2. ԱՆԿԱՏԱՐԻ միջև, որն արտահայտում է դեռևս շարունակվող գործողություն

❖ **«Քո թևերի հովանին»** Աստծուն նկարագրող իգական սեռի փոխաբերություններից մեկն է:

1. որպես մայր հավք – Ծնն. 1:2, Ելից 19:4, 2 Օր. 32:11, 33:12, Ես. 31:5
2. կերակրող մայր – Եսայի 49:15, 66:13, Ովս. 11:4 (շտկում)

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՏՎԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ</u>

❖ **«մինչև պատուհասներն անցնեն»** Սա շարունակում է Աստծո մասին որպես մայր թռչնի փոխաբերությունը: Նկատե՛ք, որ «պատուհաս» (այսինքն՝ «կործանիչ քամիները կամ փոթորիկը», BDB 217, տես՝ նմանատիպ տերմիններ Սաղմ. 55:8-ում) անձնավորված է (տես՝ Եսայի 26:20):

57:2 «Բարձրյալ Աստված» Սա *Էլոհիմ* անունն է (BDB 43, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ</u>) համադրված *Էլիոն* (BDB 751 I) անվան հետ: Տես՝ Սաղմ. 7:17 և 46:4բ:

❖ **«Աստված»** Սա *Էլ* (BDB 42) ՀՄԱ-ում Աստծո համար կիրառվող ընդհանուր անունն է:

❖ **«ինձ *բոլոր* բարիքներ անող Աստծուն»** Ինչպիսի՛ հավատք պարունակող հայտարարություն (տես՝ Սաղմ. 138:8): Փորձառությունն ասում է, որ «բոլորը» պետք է սահմանել և սահմանափակել: Սակայն այս հավատարիմ հետևորդը հավատում է (տես՝ Փիլ. 1:6):

Այս համատեքստում Աստծո գործողությունները նշվում են Սաղմ. 57:3-ում՝

1. ուղարկիր երկնքից – ով կամ ինչը հատուկ չի նշվում:
2. փրկիր ինձ դաժան թշնամիներից (տես՝ Սաղմ. 57:4,6)
3. ինձ կուլ տալ ցանկացողի նախատինքից (տես՝ Սաղմ. 56:2) – BDB 357 I. սա նշանակում է «հանդիմանել» կամ «ամոթահար անել» նրանց, ովքեր ասում են սուր բաներ (տես՝ թշնամիները նկարագրված որպես սուր ժանիքներով առյուծներ, Սաղմ. 57:4):
4. ուղարկում է Իր անձնավորված բարեգթությունը և ճշմարտությունը՝ հավատարմությունը, տես՝ Սաղմ. 89:14 և նաև Սաղմ. 43:3, որտեղ «լույսը» և «ճշմարտությունը» անձնավորված են որպես ՅԱՀՎԵԻ ծառաները:

57:3 «ուղարկիր երկնքից» «Երկինք» տերմինը ունի երկու տարբեր կիրառություններ:

1. երկրի վրա մթնոլորտը (տես՝ Սաղմ. 57:5, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ</u>)
2. վայր, որտեղ բնակվում է ՅԱՀՎԵՆ (տես՝ Սաղմ. 57:5, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔ</u>)

Հին Կտակարանյան մտայնությամբ Աստված տրանսցենդենտ էր: Իսրայելի Սուրբը Ծննդոց 3-ի անկումից հետո Իրեն զատել էր մեղավոր ստեղծագործությունից: Նա բնակվում էր Իսրայելի հետ Սրբության Սրբոցում՝ *Քերովբեների* թևերի միջև, ուխտի տապանակի ողորմության աթոռի վրա (որը խորհրդապատկերում էր քավության վայրը, տես՝ Ղևտացիների 16): Դիտավորյալ լարվածություն կա ՅԱՀՎԵԻ տրանսցենդենտալ սրբության և Իսրայելի ներհատկության միջև:

❖ **«Սելա»** Տես Սաղմ. 3:2-ի գրառումը և Սաղմոսների Ներածություն, VII:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 57:4-6
[4]Իմ անձը առյուծների մեջ է.
Կրակ դարձած մարդկանց մեջ եմ պառկում,
Ու մարդկանց որդիների, որոնց ատամները նիզակներ ու նետեր են,
Իսկ լեզուները՝ սրած թրեր:
[5]Փառավորվի՛ր երկինքներից վեր, ո՛վ Աստված,
Քո փառքը թող ամբողջ երկրի վրա լինի:
[6]Իմ քայլերի համար որոգայթ պատրաստեցին.
Անձս խոնարհվեց, փոս փորեցին իմ առջև,
Բայց իրենք ընկան մեջը: Սելա:

57:4-6 Այս համարները բնութագրում են սաղմոսերգուի թշնամիներին և նրա Աստծուն, որ օգնում է իրեն (տես՝ Սաղմ. 57:2):

1. թշնամիները
   ա. առյուծների պես
   բ. կրակ են շնչում (կամ KB 521 II, պատառոտել, որը միայն այստեղ է)
   գ. ատամները՝ խոսքերը նիզակներ ու նետեր են
   դ. որոգայթ պատրաստեցին, որպեսզի բռնեն նրան և սպանեն, սակայն իրենք են ընկնելու դրա մեջ (տես՝ Առակ. 26:27)
2. Աստված (տես՝ Սաղմ. 57:5,11)
   ա. մեծարվի՛ր – BDB 926, KB 1202, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, այստեղ «երկինքները» վերաբերում է երկրի վրա գտնվող մթնոլորտին (նկատե՛ք զուգահեռականությունը)
   բ. Քո փառքը թող ամբողջ երկրի վրա լինի
3. սաղմոսերգուն՝
   ա. ես պառկում եմ . . . մեջ – BDB 1011, KB 1486, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
   բ. անձս խոնարհվեց – BDB 496, KB 493, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 57:7-11
[7]Սիրտս պատրաստ է, ո՛վ Աստված, սիրտս պատրաստ է.
Պիտի երգեմ ու փառաբանեմ:
[8]Արթնացի՛ր, ո՛վ իմ փառք. արթնացե՛ք, ո՛վ տավիղ ու քնար.
Ես վաղ եմ արթնանալու:
[9]Ժողովուրդների մեջ Քեզ եմ փառաբանելու, ո՛վ ՏԵՐ.
Ազգերի մեջ Քեզ սաղմոս եմ երգելու.
[10]Քանի որ մեծ է Քո ողորմությունը՝ մինչև երկինք,
Եվ ճշմարտությունդ՝ մինչև ամպերը:
[11]Փառավորվի՛ր, ո՛վ Աստված, երկինքներից վեր,
Քո փառքը թող ամբողջ երկրի վրա լինի:

57:7-11 Այս պարբերությունը գրեթե նույնն է ինչ Սաղմ. 108:1-5: Հավանաբար այն եղել է պատարագի կրկներգ:

57:7-9 Այս պարբերությունն արտահայտում է սաղմոսերգուի հավատքը և վստահությունը ՅԱՀՎԵԻ գործողությունների վրա՝ իր համար:

1. իմ սիրտը պատրաստ է, Սաղմ. 57:7 (երկու անգամ) – BDB 465, KB 464, *Niphal* ԴԵՐԲԱՅ
2. երգելու եմ, Սաղմ. 57:7 – BDB 1010, KB 1479, *Qal* ԸՂՁԱԿԱՆ

3. փառաբանություն կերգեմ, Սաղմ. 57:7 – BDB 274, KB 273, *Piel* ԸՂԶԱԿԱՆ
4. արթնացի՛ր, ո՛վ իմ փառք (կամ «իմ անձ», բառացի՝ «լյարդ», երկուսն էլ BDB 458), Սաղմ. 57:8 – BDB 734, KB 802, *Qal* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ
5. արթնացի՛ր տավիղ ու քնար (այսինքն՝ Աստծուն փառաբանելու համար սաղմոսերգուի երաժշտական գործիքները), Սաղմ. 57:8 – BDB նույն ԲԱՅԸ ինչ #4-ում
6. ես վաղ եմ արթնանալու, Սաղմ. 57:8 – BDB 734, KB 802, *Hiphil* ԸՂԶԱԿԱՆ
7. Քեզ եմ փառաբանելու, Սաղմ. 57:9 – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով
8. Քեզ սաղմոս եմ երգելու, Սաղմ. 57:9 – BDB 274, KB 273, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով

57:9 Ուշադրություն դարձրեք «ժողովուրդներ» (BDB 766 I) և «ազգեր» (BDB 115 և BDB 52, այսինքն՝ ոչ ուխտի ժողովուրդ) բառերի միջև զուգահեռականությունը: Սաղմոսներում պարբերաբար կրկնվող շեշտադրություն կա Իսրայելի Աստծո համընդհանուր լինելու վրա (տես՝ Սաղմ. 9:11բ, 18:47, 49, 105:1, 145:12-13): Միաստվածության ենթատեքստում այն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ), որ միայն մեկ ճշմարիտ Աստված կա, որը ստեղծել է մարդկանց Իր պատկերով և նմանությամբ Իր հետ փոխհարաբերվելու համար (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

57:10 Այս համարը կրկնում է Աստծո անձնավորված ծառաներին (այսինքն՝ *hesed* և *emet*) Սաղմ. 57:3-ից: Դրանք երկուսն էլ ասվում է, որ «վեր» են երկինքներից և ամպերից (այսինքն՝ այս մոլորակի մթնոլորտից), որը մատնացույց է անում՝
1. դրանց մեծությունը
2. դրանց Աստծուց սկիզբ առնելը

57:11 Սա կրկնում է Սաղմ. 57:5-ը: Այն գործում է որպես Աստծո մեծությունը մատնանշող կերպ (այսինքն՝ Իր ստեղծագործության վրա Նրա գերազանցությունը):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Բացատրե՛ք «Քո թևերի հովանի» փոխաբերությունը Սաղմ. 57:1-ում:
2. Թվարկե՛ք Սաղմ. 57:2-ում Աստծո համար տրված երեք անունները և բացատրե՛ք դրանց ենթատքստերը:
3. Սահմանե՛ք «երկինքը»:
4. Ինչո՞ւ են Աստծո բնավորության կողմերը անձնավորված:
5. Բացատրե՛ք Սաղմ. 57:9-ը միաստվածության լույսի ներքո: